ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«29» նոյեմբերի 2012 թ. թիվ 1043-Հ.

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ՃՇԳՐՏՈՂ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 23-ի թիվ 207-Ն որոշմամբ հաստատված “Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագրի” /այսուհետ՝ Ընդհանուր նկարագիր/ 12-րդ կետը՝

հրամայում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության /այսուհետ՝ Տեսչություն/ կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների ռիսկայնության չափանիշների և ճշգրտող գործակիցների հաշվարկման և գնահատման կարգը՝ համաձայն N1 հավելվածի:

2. Հաստատել 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների համար պահանջվող տեղեկատվության ձևաչափը՝ համաձայն N2 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի համակարգչային տեխնոլոգիայի սպասարկման վարչությանը՝ մինչև ս.թ. նոյեմբերի 10-ը կազմակերպել Ընդհանուր նկարագրի 22-րդ և 23-րդ կետերով սահմանված՝ Տեսչության տվյալների բազայի՝ որպես ֆայլինգի համակարգի, ստեղծման և հետագա գործունեության ապահովումը:

4. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական կազմակերպությունների մոնիթորինգի վարչությանը՝ մինչև յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 10-ը ապահովել Ընդհանուր նկարագրի 26-րդ կետով սահմանված տվյալների շտեմարանում ներառվող՝ 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար պահանջվող տեղեկատվությունը՝ համաձայն N2 հավելվածով սահմանված ձևաչափի: Նշված տվյալները ներկայացվում են նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ:

5. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությանը և համակարգչային տեխնոլոգիայի սպասարկման վարչությանը՝ ապահովել գանձապետական համակարգի LSBase և GANDZ ծրագրերին Տեսչության մասնակցությունը դիտորդի կարգավիճակով և Ընդհանուր նկարագրի 26-րդ կետով սահմանված տվյալների շտեմարանում ներառվող՝ նախարարությունների, գերատեսչությունների, մարզպետարանների և համայնքների համար պահանջվող տեղեկատվության հասանելիությունը, ինչպես նաև LSBase և GANDZ ծրագրերում ստեղծել նշված տեղեկատվության արտածման և համապատասխան հաշվետվության ստեղծման հնարավորություն:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱՐԱՐ՝ ՎԱՉԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված 1
ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի
նոյեմբերի 29-ի N 1043-Լ հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ՃՇԳՐՏՈՂ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սույն կարգի նպատակն է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 23-ի թիվ 207-Ն որոշմամբ հաստատված հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագրով նախատեսված ռիսկայնության չափանիշների և ճշգրտող գործակիցների հաշվարկումը և գնահատումը, որը հիմք է հանդիսանալու Տեսչության ստուգումների իրականացման տարեկան ծրագրերը կազմելու համար:

2. Սույն կարգի շրջանակներում վերահսկվող օբյեկտները բաժանվում են հետևյալ խմբերի և ենթախմբերի.

1) վերահսկվող օբյեկտներ, որոնք ապահովում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մուտքերը՝

ա. բյուջետային եկամուտների գանձման նկատմամբ հսկողություն իրականացնող պետական մարմիններ,

բ. 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերություններ.

2) վերահսկվող օբյեկտներ, որոնք միջոցներ են ստանում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝

ա. պետական կառավարչական հիմնարկներ,

բ. համայնքներ:

3. Տեսչությունը մինչև յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 5-րդ աշխատանքային օրը հստակեցնում է վերահսկվող օբյեկտների անվանացանկը, որի հիման վրա իրականացնում է ռիսկի գնահատումը և կազմում է հաջորդ տարվա ստուգումների տարեկան ծրագիրը:

4. Ռիսկերի գնահատման ժամանակ հաշվի են առնվում՝

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մուտքեր ապահովող՝ բյուջետային եկամուտների գանձման նկատմամբ հսկողություն իրականացնող պետական մարմինների և 50 տոկոս ու ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների մասով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե հավաքագրվող (հարկեր և տուրքեր) գումարների և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող շահութաբաժինների ծավալները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող շահութաբաժինների հաշվարկման համար հիմք հանդիսացող ցուցանիշները և նշված գումարները վճարող տնտեսավարող սուբյեկտների գործունեության ոլորտները, իսկ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից միջոցներ ստացող վերահսկվող օբյեկտների մասով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացվող գումարների ծավալները, այդ գումարների օգտագործման ուղղություններն ըստ տնտեսության ոլորտների, բյուջետային ծախսերի գործառական դասակարգման խմբերի ու տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

5. Վերահսկվող օբյեկտների ռիսկայնության գնահատման նպատակով սահմանվել են ռիսկայնության չափանիշներ՝ ըստ վերահսկվող օբյեկտների ոլորտների: Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վերահսկվող օբյեկտին հատկացված գումարների մեծությանը վերաբերող չափանիշները հաշվարկվում են

որպես միջին մեծություն, որը տվյալ օբյեկտում իրականացված վերջին ստուգումից մինչև տեսչության տարեկան ստուգումների ծրագիրը կազմելուն նախորդող ֆինանսական տարվա դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակաշրջանում (բայց ոչ ավելի, քան 3 տարի) Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների միջին թվաբանական է: Ռիսկայնության չափանիշների (հարցերի) պատասխանները գնահատվում են բալային համակարգով. ինչքան բարձր է պատասխանի թվային արտահայտությունը, այնքան բարձր է բալը: Ռիսկայնության վերոհիշյալ չափանիշներին տրվում են բալեր՝ 1-3, որտեղ 1-ը նվազագույն բալն է, 3-ը՝ առավելագույն:

6. Ելնելով վերոգրյալից՝ վերահսկվող օբյեկտները գնահատվում են ըստ ոլորտների հետևյալ մոտեցմամբ.

1) բյուջետային եկամուտների գանձման նկատմամբ հսկողություն իրականացնող պետական մարմիններ, այդ թվում՝

ա. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային տեսչությունների համար՝

I. չափանիշների 1-ին հարցը՝ օրենքով սահմանված՝ ավելացված արժեքի հարկ վճարող համարվելու շեմից բարձր տարեկան շրջանառություն (գործունեությունից հասույթ) ունեցող հարկ վճարողների տեսակարար կշիռը հաշվետվություն և (կամ) հաշվարկ ներկայացնող հարկ վճարողների ընդհանուր թվի մեջ, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-2% միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 2-4% միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 4%-ից ավելի միջակայքում:

II. չափանիշների 2-րդ հարցը՝ 50.0 մլն դրամ և ավելի մաքսային արժեքով ներկրումներ իրականացրած հարկ վճարողների թիվը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-25 միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է

25-50 միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 50-ից ավելի միջակայքում:

III. չափանիշների 3-րդ հարցը՝ 30.0 մլն դրամ և ավելի Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարումներ (հարկեր և պատադիր վճարներ) իրականացրած հարկ վճարողների թիվը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-20 միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 20-40 միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 40-ից ավելի միջակայքում:

IV. չափանիշների 4-րդ հարցը՝ ավելացված արժեքի հարկի գծով 10.0 մլն դրամ և ավելի ազատված շրջանառություն ունեցող հարկ վճարողների թիվը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-25 միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 25-50 միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 50-ից ավելի միջակայքում:

բ. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսատների համար՝

I. չափանիշների 1-ին հարցը՝ 50.0 մլն դրամ և ավելի մաքսային արժեքով ներկրումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների տեսակարար կշիռը ներկրումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների ընդհանուր թվի մեջ, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-20% միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 20-40% միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 40%-ից ավելի միջակայքում:

II. չափանիշների 2-րդ հարցը՝ մաքսատուրքի և (կամ) ավելացված արժեքի հարկի վճարումից ազատված տնտեսավարող սուբյեկտների թիվը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-20 միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 20-40 միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 40-ից ավելի միջակայքում:

III. չափանիշների 3-րդ հարցը՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներկրումներ և Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների միջոցով

տարեկան 30.0 մլն դրամ և ավելի Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարումներ իրականացրած տնտեսավարող սուբյեկտների թիվը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-50 միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 50-100 միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 100-ից ավելի միջակայքում:

IV. չափանիշների 4-րդ հարցը՝ ավելացված արժեքի հարկի վճարման ժամկետի հետաձգման գծով արտոնություններ ստացած տնտեսավարող սուբյեկտների թիվը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-10 միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 10-20 միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 20-ից ավելի միջակայքում:

գ. 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների համար՝

I. չափանիշների 1-ին հարցը՝ իրացման շրջանառությունը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-100.0 մլն. դրամ միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 100.0-500.0 մլն. դրամ միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 500.0 մլն. դրամից ավելի միջակայքում:

II. չափանիշների 2-րդ հարցը՝ շահույթի (վնասի) մեծությունը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-5.0 մլն. դրամ միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 5.0-20.0 մլն. դրամ միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 20.0 մլն. դրամից ավելի միջակայքում:

III. չափանիշների 3-րդ հարցը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեին հասանելիք շահութաբաժնի գումարի մեծությունը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-1.0 մլն. դրամ միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 1.0-5.0 մլն. դրամ միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 5.0 մլն. դրամից ավելի միջակայքում:

IV. չափանիշների 4-րդ հարցը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հանդեպ շահութաբաժնի գծով պարտքի մեծությունը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-1.0 մլն. դրամ միջակայքում, 2 բալ՝ եթե

պատասխանը գտնվում է 1.0-3.0 մլն. դրամ միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 3.0 մլն. դրամից ավելի միջակայքում:

2) պետական կառավարչական հիմնարկներ, այդ թվում՝

ա. նախարարությունների, գերատեսչությունների համար՝

I. չափանիշների 1-ին հարցը՝ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված գումարի մեծությունը, այդ թվում՝ օտարերկրյա պետություններից հատկացվող վարկային և դրամաշնորհային գումարների մեծությունը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-1000.0 մլն. դրամ միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 1000.0-3000.0 մլն. դրամ միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 3000.0 մլն. դրամից ավելի միջակայքում:

II. չափանիշների 2-րդ հարցը՝ պետական մարմնի կողմից իրականացված բյուջետային ծրագրերի թիվը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-9 միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 9-35 միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 35-ից ավելի միջակայքում:

III. չափանիշների 3-րդ հարցը՝ պետական մարմնի ենթակա կազմակերպությունների թիվը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-4 միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 4-15 միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 15-ից ավելի միջակայքում:

IV. չափանիշների 4-րդ հարցը՝ պետական մարմնի կողմից իրականացված ոչ ֆինանսական ակտիվների և կապիտալ դրամաշնորհների գծով ծախսերի գումարը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-100.0 մլն. դրամ միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 100.0-1000.0 մլն. դրամ միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 1000.0 մլն. դրամից ավելի միջակայքում:

բ. մարզպետարանների համար՝

I. չափանիշների 1-ին հարցը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորված գումարի մեծությունը (այդ թվում՝ սուբվենցիա և այլն),

գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-4000.0 մլն. դրամ միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 4000.0-8000.0 մլն. դրամ միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 8000.0 մլն. դրամից ավելի միջակայքում:

II. չափանիշների 2-րդ հարցը՝ կապիտալ ծախսերի համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված գումարների ծավալը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-550.0 մլն. դրամ միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 550.0-1100.0 մլն. դրամ միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 1100.0 մլն. դրամից ավելի միջակայքում:

III. չափանիշների 3-րդ հարցը՝ մարզպետարանի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների թիվը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-60 միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 60-120 միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 120-ից ավելի միջակայքում:

IV. չափանիշների 4-րդ հարցը՝ ՍԾՏԳ-ների միջոցով վճարված նպաստների ծավալը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-2000.0 մլն. դրամ միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 2000.0-4000.0 մլն. դրամ միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 4000.0 մլն. դրամից ավելի միջակայքում:

3) Համայնքները գնահատվում են հետևյալ կերպ.

I. համայնքների չափանիշների 1-ին հարցը՝ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված գումարի՝ դոտացիայի մեծությունը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-150.0 մլն. դրամ միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 150.0-300.0 մլն. դրամ միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 300.0 մլն. դրամից ավելի միջակայքում:

II. չափանիշների 2-րդ հարցը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված սուբվենցիաների և այլ միջոցների ծավալը, գնահատվում է

1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-2.0 մլն. դրամ միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 2.0-4.0 մլն. դրամ միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 4.0 մլն. դրամից ավելի միջակայքում:

III. չափանիշների 3-րդ հարցը՝ կապիտալ ծախսերի համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված գումարների ծավալը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-6.0 մլն. դրամ միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 6.0-12.0 մլն. դրամ միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 12.0 մլն. դրամից ավելի միջակայքում:

IV. չափանիշների 4-րդ հարցը՝ համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցների ծավալը, գնահատվում է 1 բալ, եթե պատասխանը գտնվում է 0-3.0 մլն. դրամ միջակայքում, 2 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 3.0-6.0 մլն. դրամ միջակայքում և 3 բալ՝ եթե պատասխանը գտնվում է 6.0 մլն. դրամից ավելի միջակայքում:

7. Բացի նշված ռիսկերի գնահատման չափանիշներից տեսչության կողմից վերահսկվող օբյեկտների ռիսկերի գնահատման ընթացքում կիրառվում են նաև ճշգրտող գործակիցներ: Ճշգրտող գործակիցները պետք է բնութագրեն վերահսկող օբյեկտներում նախկինում իրականացված ստուգումների արդյունքները, մասնավորապես, բացահայտված խախտումների բնույթը, հետևանքները, հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ ձեռնարկված քայլերի արդյունավետությունը, ներքին աուդիտի աշխատանքներին տրված գնահատականը և այլն: Ճշգրտող գործակիցները պետք է ձևավորվեն հարցերով և վերջիններիս պատասխանները պետք է գնահատվեն ըստ բալերի՝ ելնելով այն տրամաբանությունից, թե ինչքան արդյունավետ է աշխատանքներ իրականացրել վերահսկվող օբյեկտը, այնքան բարձր է տրվող բալը, և, ինչքան անարդյունավետ է աշխատանքներ իրականացրել վերահսկվող օբյեկտը, այնքան ցածր է տրվող

բալը: Ճշգրտող գործակիցները ձևավորվում են հարցերին տրված բալերի հանրագումարով, որոնց ընդհանուր գումարը չի կարող գերազանցել յուրաքանչյուր ոլորտի չափանիշներին տրված առավելագույն բալերի հանրագումարի քսան տոկոսը:

8. Ելնելով վերոգրյալից, բոլոր վերահսկվող օբյեկտների գծով ճշգրտող գործակիցների բնութագրման համար սահմանվում են հետևյալ հարցերը՝

1) Վերստուգվող օբյեկտների կողմից նախորդ ստուգման ընթացքում թույլ տված խախտումների բնույթը,

2) Նախորդ ստուգումներով արձանագրված գումարների վերականգնման/վերաձևակերպման ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունավետությունը,

3) Վերստուգվող օբյեկտների ներքին աուդիտի աշխատանքների արդյունավետությունը:

Վերոհիշյալ ճշգրտող գործակիցները Տեսչության կողմից գնահատվում են ինքնուրույն՝ –1.2-ից +1.2 միջակայքում:

9. 2013թ. տեսչության ստուգումների տարեկան ծրագրում ճշգրտող գործակիցներին կտրվի զրո արժեքը՝ նկատի առնելով, որ ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը նոր է ներդրված և համապատասխան տվյալներ չկան, քանի որ նախորդ ստուգումների ակտերը համադրելի չեն նոր համակարգով իրականացվող ստուգումների ակտերին: Ճշգրտող գործակիցները 2013 թվականից հետո կազմվող Տեսչության տարեկան ստուգումների ծրագրում կգնահատվեն այն վերահսկվող օբյեկտների նկատմամբ, որոնք Տեսչության կողմից ստուգվել են 2013 թվականին և դրանից հետո, իսկ մնացած վերահսկվող օբյեկտների մասով ճշգրտող գործակիցների գնահատականը կշարունակվի գնահատվել զրո:

10. Ընդհանուր ռիսկի միավորը հաշվարկվում է, հաշվի առնելով չափանիշների և ճշգրտող գործակցի հանրագումարի մեծությունը, որն էլ համարվում է վերահսկվող օբյեկտի ռիսկի միավորը: Ըստ այդ ռիսկի միավորի պետք է որոշվի տեսչության կողմից վերահսկման ենթակա օբյեկտների ռիսկայնության աստիճանը (կամ խումբը):

11. Ըստ ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշների գնահատման՝ վերահսկվող օբյեկտները դասակարգվում են հետևյալ երեք խմբերից որևէ մեկում՝

1) բարձր ռիսկայնության.

2) միջին ռիսկայնության.

3) ցածր ռիսկայնության:

Ռիսկայնության խումբը	Միավորը
Բարձր	10 և ավելի միավորներ հավաքած վերահսկվող օբյեկտներ
Միջին	7-9 միավոր հավաքած վերահսկվող օբյեկտներ
Ցածր	4-6 միավորներ հավաքած վերահսկվող օբյեկտներ

12. Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, տեսչության հսկողության տարեկան ծրագիրը կազմվում է հետևյալ համամասնությամբ.

1) բարձր ռիսկայնության խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտները կազմում են տվյալ տարում ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների առնվազն յոթանասուն տոկոսը.

2) ցածր ռիսկայնության խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտները կազմում են տվյալ տարում ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների առավելագույնը հինգ տոկոսը:

Ընդ որում բարձր ռիսկայնության խմբում ընդգրկվում են ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների մինչև քսան տոկոսը՝ ըստ ռիսկի միավորի նվազման: Հաշվի առնելով օրենքի այս պահանջը, միջին ռիսկայնության խմբի

վերին շեմը և բարձր ռիսկայնության ներքին շեմը սահմանվում են որպես փոփոխական մեծություններ այն դեպքերի համար, երբ վերահսկվող օբյեկտների ռիսկայնության գնահատման արդյունքում վերջիններիս թիվը գերազանցում է քսան տոկոսը: Նշված դեպքում բարձր ռիսկային խմբում ընդգրկված վերահսկվող օբյեկտների թիվը նվազեցվում է միավորների նվազման հաջորդականության սկզբունքով, մինչև նշված քսան տոկոսի շեմը:

Ստուգումների տարեկան ծրագրի կազմման ընթացքում, հավասար պայմանների առկայության պարագայում, քաղաքային համայնքների ընտրության ժամանակ հաշվի է առնվում նաև այն հանգամանքը, թե համապատասխան մարզպետարանը ընդգրկվում է արդյոք ստուգման տարեկան ծրագրում թե ոչ և նախապատվությունը տրվում է այն քաղաքային համայնքներին, որոնց մարզպետարաններն ընդգրկվում են տարեկան ստուգման ծրագրում:

Հավելված 2
ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի
նոյեմբերի 29-ի N 1093/Հրամանի

50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների համար պահանջվող տեղեկատվության ձևաչափ

հ/հ	Լիազոր մարմնի անվանումը	Կազմակերպության անվանումը	Իրացման շրջանառությունը	Շահույթի (վնասի) մեծությունը	ՀՀ պետական բյուջեին հասանելիք շահութաբաժնի գումարի մեծությունը	ՀՀ պետական բյուջեի հանդեպ շահութաբաժնի գծով պարտքի մեծությունը